ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**

<<_____>> _____2019թ. N ---------- **Ֆաքս/374010/ 28 18 32**

<<ՖԱԿՏՈՐ.ԱՄ>> - Ի ԼՐԱԳՐՈՂ
ՆԱՐԵԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Կիրակոսյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2019 թվականի դեկտեմբերի 10-ին հասցեագրված (մտից փաստաթուղթ թիվ 7625) Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ պարգևատրման ֆոնդի չափի, աշխատողների տարեկան պարգևատրումների, պարգևատրման ամենամեծ և ամենափոքր չափերի, ում կողմից և ինչքան պարգևատրված լինելու մասին տեղեկատվություն չենք կարող տրամադրել, քանի որ աշխատակազմում կատարել ենք հարցում, սակայն չենք ստացել աշխատակիցների համաձայնությունը՝ իրենց տվյալները փոխանցելու համար: <<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով: Ինչպես նաև <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները (վարձատրության մասին տեղեկատվությունը), առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող տրամադրվել:

Նաև տեղեկացնում ենք, որ մարզպետարանի հաստիքացուցակը հասանելի է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի vdzor.mtad.am պաշտոնական կայքում:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ս.Մխիթարյան, Հեռ. (0281) 2 55 95